ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ-8 հերթական նիստի օրակարգը՝

1. Ղուկասավան համայնքի 2018թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին
2. Ղուկասավան համայնքի 2019թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին
3. <<Սաթենի>> մսուր մանկապարտեզի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին
4. Ղուկասավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատման մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ԱՐՇԱԿՅԱՆ ՎԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 26-Ն

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի 5)-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ղուկասավան համայնքի 2018թ. վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.2018թ. վարչական բյուջեի 08-02-03 մշակույթի տներ, ակումբներ և կենտրոններ նախահաշվով նախատեսված 4111 աշխատողների աշխատավարձ և հավելավճար հոդվածը պակասեցնել 268000 դրամ, որն ավելացնել՝

ա) 01-01-01 օրենսդիր գործադիր մարմիններ նախահաշվով նախատեսված 4252 մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածին ավելացնել 100000 դրամ իսկ 4241 մասնագիտական ծառայություններ հոդվածին 50000 դրամ

բ) 08-02-01 գրադարանային ծառայություններ նախահաշվով նախատեսված 4111 աշխատողների աշխատավարձ և հավելավճար հոդվածին ավելացնել 118000 դրամ

2. 10-07-01 սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասի չպատկանող/ նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունը՝

ա) 4826- հուղարկավորության նպաստ հոդվածից պակասեցնել 150000 դրամ

բ) 4729- այլ նպաստներ բյուջեից հոդվածին ավելացնել 150000 դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք.
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 27-Ն

2019թ. ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերով և << Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ղուկասավան համայնքի 2019թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈՀՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ղուկասավան համայնքի ավագանու 09.11.2018թ.

Թիվ ---27--- -Ն որոշման

Հավելված

2019թ. ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.
5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.
6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝քսանհինգ հազար դրամ.
7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար վեց հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասհազար հիսուն դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ.
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար վեց հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասհազար հիսուն դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ.
10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանվեց հազար դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարի դրամ,
դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարի դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազարի դրամ.
12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հիսուն դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր հիսուն դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասս հազար հիսուն դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հիսուն դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հիսուն դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր հիսուն դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հիսուն դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հիսուն դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր հիսուն դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

18) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

2. Սույն հոդվածով՝ 1-ին մասով սահմանված դրույքաչափերը՝ համայնքի ավագանու որոշմամբ՝ հաշվարկվել են 0.5 գործակիցների կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ:

2. Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

4) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

5) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

6) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ ամիսը հինգ հազար դրամ.

7) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափի՝ փոխհատուցման գումարի չափով:

Համայնքի ղեկավար Ա. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 28-Ա

<<ՍԱԹԵՆԻ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 15-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Լոկալ ջեռուցում չունենալու պատճառով սույն թվականի դեկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում դադարեցնել <<Սաթենի>> մսուր մանկապարտեզի գործունեությունը:

Աշխատողների աշխատավարձի վարձատրությունը կատարել օրենքով սահմանված կարգով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԱԿՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան; 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 29-Ա

ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 30) ենթակետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ղուկասավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ղուկասավան համայնքի
Ավագանու 09.11.2018թ.
Թիվ 29-Ա որոշման

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը մշակվել է հիմք ընդունելով գոտևորման նախագծը:

1.2. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի ,Լրացուցիչ պայմաններե բաժնում:

1.3. Համայնքի քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է Ղուկասավան համայնքի գոտևորման սխեմայի, սույն կանոնադրության , ՀՀ քաղաքաշինական բնագավառի օրենսդրության , գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ (Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի տարածքում գտնվում են հիմանականում վերջին 80 տարվա ընթացքում կառուցված շենքեր և շինություններ, որոնց մեջ աչքի ընկող կառույցներում գերիշխում է ավանդական քարի ճարտարապետական ոճը, ինչպես նաև վերջին 25 տարիներին կառուցված նորառոճ շենքերը՝ երկաթբետոնե կարկասային կոնստրուկտիվ լուծումներով՝ ժամանակակից բացորակ շինարարական նյութերի կիրառմամբ և տեխնիկական հագեցվածությամբ, հճախ համադրած ավանդականի հետ:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Համաձայն ՀՀ կառավարության 3 հոկտեմբերի 2002թ. N 1589-Ն որոշման Արարատի մարզի Ղուկասավան համայնքի տարածքում տեղակայված հուշարձանների պետական ցուցակը բերված է համապատասխան աղյուսակում:

Ղուկասավան համայնք

1	2	3	4	5	6
N	Հուշարձան Հուշարձանախումբ	Ժամանակը	Տեղը	Հուշարձանն ըստ նշանակության	Ծանոթություն
1	ԵԿԵՂԵՑԻ Ս.ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	19 դ.	գ.մ.	Տ	կիսավեր
2	ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1975 թ.	գ.մ.	Տ	
3	ՀՈՒՇԱՐՁԱՆ ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ	1972 թ.	գ.մ.	Տ	քանդ. Ա.Չաքմաքչյան

3.2. Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ:

3.3. Համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոտիների սահմաններում կառուցապատման ցանկացած աշխատանք իրականացնել միայն համապատասխան նախագծերի առկայության դեպքում:

3.4. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 Պահպանման ենթակա են 3.1 կետում նշվածները, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող համայնքիհամար կարևոր նշանակություն ունեցող հետևյալ շենքերը և շինությունները.

ա) Խմելու ջրի ջրամատակարարման ցանցը, որը ունի ընդլայնման և նորացման կարիք,

բ) Համայնքի տարածքով անցնող ոռոգման հիմնական ջրանցքը, ոռոգման առուների ցանցը, որը ունի հիմնովին նորացման, ընդլայնման և ամենամյա մաքրման կարիք,

գ) Մշակույթի տունը և հուշահամալիր այգին,

դ)Ղուկասավանի մանկապարտեզը:

ե) Ղուկասավան Համայնքի միջնակարգ դպրոցը,

զ) Համայնքի փողոցների ցանցը, որը գրեթե ամբողջությամբ ունի հիմնանորոգման, բարեկարգման և գիշերային լուսավորության կարիք,

է) Ղուկասավան Համայնքի գերեզմանոցը:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Համայնքի տարածքում խրախուսվում են ինչպես ավանդական, այնպես էլ արդի ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը՝ պայմանով, որ կատարվեն ճաշակով և մասնագիտական բարձր վարպետությամբ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

իրականացնելիս հաշվի առնել քաղաքաշինական ձևավորված կամ նոր ձևավորվող միջավայրին հարազատ մնալու, չխաթարելու, այլ ընդհակառակը, բարելավելու, զարգացնելու անհրաժեշտությունը:

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը

հատուկ ուշադրություն դարձնել փողոցի կողմի ցանկապատի և մուտքի գեղարվեստական ձևավորմանը, բարեկարգել փողոցի հարակից հատվածը միասնական ոճով և նյութերով,

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները (.հինգերորդ ճակատե), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,

իրականացնել, հաշվի առնելով համայնքի քաղաքաշինական միջավայրի ձևավորման վրա դրանց մեծ ազդեցությունը,

դ. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

խրախուսվում են շենքի ճակատների և փողոցի հարակից մասերի արտաքին լուսավորությունը:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը

Ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),
ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները).
խրախուսվում են բարձրորակ, հարատև, էկոլոգիապես մաքուր ու անվնաս շին. նյութերը:

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը,
համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառները ծածկոցով և նստարաններով հագեցնել և ձևավորել գեղարվեստական ճաշակով բարձրորակ շին. նյութերով,

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),
հասարակական նշանակության շենքերում և տարածքներում ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),
դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),
հասարակական, ինչպես նաև մասնավոր տարածքներում խրախուսվում է ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),
ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր) հանդիսանում են մշտական հոգածության ոլորտներ,

բ. անհրաժեշտության դեպքում՝ քամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ),

հետևողականորեն իրականացնել,հատկապես համայնքի հյուսիսային հատվածում, հանքերի փոշու և քամու դեմ պաշտպանական գոտու, ինչպես նաև գերեզմանոցների շուրջ սանիտարական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ):

ԳԼՈՒԽ VI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Քաղաքաշինական փաստաթղթերի ձևաչափերը և կառուցապատման նպատակով դրանց տրամադրման կարգը հաստատված են ՀՀ Կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշմամբ:

Ղուկասյանի համայնքի ղեկավար՝ Արա Վարդանյան